

**ԲԱՆԱԶԵՎ Հ. 20-29,157**

**ԲԸՐԲԵՆՔ ՔԱՂԱՔԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԲԱՆԱԶԵՎ, ՈՐՈՎ ԿՈՉ Է ԱՐՎՈՒՄ  
ՔԱՂԱՔԱՅԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՆՑԿԱՑՆԵԼ  
ԵՐԵՔՇԱԲԹԻ, 2020 Թ. ՆՈՅԵՄԲԵՐԻ 3-ԻՆ՝ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԵՐԿՈՒ (2)  
ԱՆԴԱՍ ԵՎ ՔԱՂԱՔԻ ՄԵՎ (1) ԳԱՆՁԱՊԱՀ ԸՆՏՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ**

**ԲԸՐԲԵՆՔ ՔԱՂԱՔԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ ՈՐՈՇՈՒՄ Է.**

1. 2020 թ. նոյեմբերի 3-ին, երեքշաբթի, Կալիֆոռնիայի Բըրբենք քաղաքում անցկացնել Բըրբենք քաղաքի Քաղաքային ընդհանուր ընտրություններ՝ Նահանգային համընդհանուր ընտրություններին զուգընթաց, հետևյալ պաշտոնների համար ու ժամկետներով առաջադրված թեկնածուներին Քաղաքի որակավորված ընտրողներին (Էլեկտորներ) ներկայացնելու նպատակով.

ա. 2024 թ. դեկտեմբերի 16-ին ավարտվող լիարժեք քառամյա ժամկետով, Քաղաքի հետևյալ ընտրովի պաշտոնների համար. Քաղաքային խորհրդի երկու անդամ, որոնք կհաջորդեն Խորհրդի անդամ Էմիլի Գեբլ-Լադդին (Emily Gabel-Luddy) և Թիմոթի Մ. Մըրֆիին (Timothy M. Murphy), որոնց պաշտոնավարման ժամկետներն ավարտվում են 2020 թ. դեկտեմբերի 14-ին; և

բ. Քաղաքի Գանձապահի ընտրովի պաշտոնի՝ 2022 թ. դեկտեմբերի 19-ին ավարտվող ժամկետի չսպառված ժամանակահատվածի համար. Քաղաքի մեկ Գանձապահ, որը կհաջորդի Քաղաքի Գանձապահ Քրիսթլ Անգ Փալմերին (Krystle Ang Palmer), որը ժամանակին նշանակվել էր՝ պաշտոնավարելու մինչև 2020 թ. նոյեմբերի ընտրություններն ու 2020 թ. դեկտեմբերի 14-ին նոր Գանձապահի կողմից պաշտոնի ստանձնումը:

3. Նշված ընտրությունների արդյունքներն ըստ օրենքի կուսումնասիրվեն ու կհայտարարվեն, և տվյալ պաշտոնի համար քվեների առավելագույն քանակը ստացած թեկնածուն կընտրվի այդ պաշտոնում:

4. Լուս Անջելես քաունթիի կազմակերպած վերոհիշյալ համանահանգային ընտրությունների համար նախատեսված ընտրական տեղամասերը, քվեարկության կենտրոնները, քվեարկության ժամերն ու ընտրական հանձնաժողովների պաշտոնյաների անունները՝ այնպես, ինչպես դրանք ստեղծվել, նշանակվել ու անվանվել են Կալիֆոռնիայի Լուս Անջելես Քաունթիի Հոգաբարձուների խորհրդի կողմից համանահանգային կարգով կազմակերպվող այդ ընտրությունների նպատակով, և համաձայն նշված Քաունթիի կողմից կազմակերպվող համանահանգային ընտրություններին վերաբերող որևէ այնպիսի ծանուցագրի, որը հրապարակվել է, կամ պետք է հրապարակվի Լուս Անջելես քաունթիի կողմից, սույնով

ստեղծվում, նշանակվում և անվանվում են, համապատասխանաբար, իբրև այս Հանրագումար քաղաքային ընտրությունների ընտրական տեղամասեր, քվեարկության կենտրոններ, քվեարկության ժամեր, և ընտրական պաշտոնյաներ: Այս Քաղաքային ընդհանուր ընտրություններին կօգտագործվի միայն մեկ քվեաթերթիկ՝ նշված Քաունթի կողմից կազմակերպված համանահանգային ընտրություններում օգտագործվող քվեաթերթիկը, և այդ ընտրությունները կանցկացվեն բոլոր առումներով այնպես, կարծես դրանք մեկ ընտրություն են հանդիսանում:

5. Քաղաքի Գործավարն այս բանաձևի ընդունումը կվավերացնի և Բանաձևի վավերացված պատճենը կներկայացնի Հոգաբարձուների խորհրդին ու Քաունթի Ընտրությունների վարչությանը, ինչպես նաև Լոս Անջելես քաունթի Ընտրացուցակների պատասխանատուին:

6. Բըրբենք քաղաքի Սահմանադրության Բաժին 800-ով սահմանված կարգով, Քաղաքի Գործավարը կապահովի այս բանաձևի հրապարակումը, ինչն ըստ Բըրբենք քաղաքի Քաղաքային օրենսգրքի Բաժին 2-3-119-ի կհանդիսանա Ընտրությունների մասին ծանուցագիր:

ԱՆՑԵԼ և ԸՆԴՈՒՆՎԵԼ Է 2020 թ. հունիսի 23-ին:

ա/Շերոն Սփրինգեր

Շերոն Սփրինգեր (Sharon Springer)

Քաղաքապետ

Ընդունված է ըստ կարգի.

Քաղաքի Փաստաբանի գրասենյակ

Վկայում եմ.

ա/Զիզեթ Մուլինզ

Զիզեթ Մուլինզ (Zizette Mullins), MMC

Քաղաքի գործավար

Ում կողմից. ա/Էյմի Ալբանո

Էյմի Ալբանո (Amy Albano)

Քաղաքի Փաստաբան

ԿԱԼԻՖՈՐՆԻԱ ՆԱՀԱՆԳ )  
ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍ ՔԱՈՒՆԹԻ ) սս.  
ԲԸՐԲԵՆՔ ՔԱՂԱՔ )

Ես, Բըրբենք քաղաքի Գործավար Զիզեթ Մուլինզ, MMC, սույնով վկայում եմ, որ վերը նշված Բանաձևը պատշաճ և կանոնավոր կերպով անցել ու ընդունվել է Բըրբենք քաղաքի Քաղաքային խորհրդի կողմից, 2020 թ. հունիսի 23-ին գումարված կանոնավոր նիստին, ձայների հետևյալ հարաբերակցությամբ.

ԱՅՈ. Ֆրութոս (Frutos), Գեբլ-Լադդի (Gabel-Luddy), Մըրֆի (Murphy),  
Թալամանթես (Talamantes) և Սփրինգեր (Springer):

ՈՉ. Չկա:

ԲԱՑԱԿԱ. Չկա:

ա/Զիզեթ Մուլինզ

Զիզեթ Մուլինզ (Zizette Mullins), MMC, Քաղաքի Գործավար